Վեր առնենք թելի ծայրից խաղագունդը և բռնենք մի փոքր աչքերից բարձր և դնենք լամպարի առաջը։ Խաղագունդը կ'երևայ մեր ու լամպարի մէջտեղը։ Կարելի է արդեօք այսպիսի գրութեան մէջ, գտնուելով խաղագնդի ետևը, տեսնել դէպի լամպարն ուղղած նրա լուսաւորուած հողը։ Ակներև է, որ՝ ոչ։ Մենք կը տեսնենք միայն նրա մութ կողմը։ — Սկսենք այժմ կամացուկ հեռացնել մեր խաղագունդը, շարժելով նրան մի փոքր դէպի ձախ և ընդ նմին չփոխելով մեր ձեռքի դիրքը, այնպէս որ նա կամացուկ պտտուի մեր շուրջը։ Այն ժամանակ կը սկսի փոքր առ փոքր երևան գալ խաղագնդի լուսաւորուած կողմը, սկզբումը միայն նրա եզրը՝ մի փոքրիկ փայլուն մանչէջ ձևով, որ աստիճանաբար կ'աճի, որքան շարժողութիւնը կը շարունակուի։

Երբ խաղագունդը իր շրջանի քառորդ մասն անցնի, այն ժամանակ

մենք կը տեսնենք նրա լուսաւորուած կողքի ուղիղ կէսը և նրա մութ կողմի կէսը։ Այն, ինչ որ երևում է լուսաւորուած կողմից, կ'երևայ թբրև մի փայլուն կիսաշրջ., իսկ չլուսաւորուած կողմը կ'երևայ թբրև մի մութ կիսաշրջան։ Հմտանելով տեղը և միայն պատեցնելով մեր մօտավը խաղագուռնը, այնպէս որ նա միշտ գտնուէր աչքերիս առաջը, փոքր առ փոքր կը վերջացրնենք լրիւ կիսագարձը։ Ո՞րքան խաղագուռնը կը սկսի շարժուել նոյն ուղղութեամբ, նրա փայլուն կողմը կ'երևայ աւելի շատ, իսկ մութ կողմը— աւելի քիչ. լուսաւորուած մասը կ'երևայ միշտ մեծանալիս, իսկ սուուերի ծայրը կամաց կամաց կը սկսի հետզհետէ աւելի հեռանալ։ Վերջապէս, երբ խաղագուռնդը կը հասնի լամպարի ուղիղ հակառակ դրութեանը (որի միջոցին մեզ կը հարկաւորուի մէջքով դառնալ դէպի լամպարը և ձեռքներս աւելի բարձր բռնել գլխներիս վերևը, որպէս զի նրա սուուերը չընկնի խաղագնտի վրայ), այն ժամանակ

բոլորովին կը տեսնենք նրա ամբողջ լուսաւորուած կողմը՝ մի բոլորովին լրացած շրջանի ձևով։ իսկ նրա մութ կողմը ուղղուած կը լինի դէպի սենեակի խորքը։

Եթէ չեռոյ շարունակենք պտտեցնել մեր խաղագուռնը մի և նոյն կողմը, որ լրացնենք նրա կատարեալ դարձը լամպարի շուրջը, այն ժամանակ ինչ կը տեսնենք։ Մի և նոյն երևոյթները, որ արդէն դիտել էինք, միայն հակառակ կարգով։ Սկզբում կը տեսնենք լուսաւորուած կողմը մի փոքր թեք և բոլորը միասին չենք տեսնի։ Մթին կողմի փոքրիկ մասը կ'երևայ այն ծայրի հանուած կողմից, որտեղ էր սուուերը խաղագուռնը այն դրութեան հասնելուց առաջ, երբ նա հակադրել էր մեզ լրիւ իր լուսաւորուած կողքը։ Փոքր առ փոքր սուուերը կ'երևայ առաջ քաշուելիս, իսկ փայլուն մասը չետ քաշուելիս (նուազելիս), և խաղագուռնը... աւելի առաջ գնացած ժամանակը կը տեսնուի միայն լուսաւորուած կողմի չէջ փայլուն կիսաշրջանի

ձևով. միայն այժմ մեզ դեռևս լամպերը ուղղած այս կլսաշրջանը մեր վերաբերությամբ գտնվում է նրա հակառակ կողմից, որ մենք տեսանք առաջ: Այն ժամանակ մենք տեսանք նրան ՝ կողմը, այժմ նա կանգնել է չոր կողմը: Զարուցնակելով խաղագնտի շրջադարձ շարժողությունը մինչև այն ժամանակը, երբ նա կրկին կբմտնեցնայ լամպարին, կը տեսնենք որ վայլուն կլսաշրջանը կերևայ աստիճանաբար նուազելիս, իսկ միւսը միշտ մեծանում է, աճում և լոյսը չետ է քաշւում դէպի հակառակ ծայրը: Զուտով խաղագունտը ցոյց կը տայ մեզ միայն մի փոքրիկ վայլուն մանգաղ, որ ապա բոլորովին կանչացատնայ, հէնց որ խաղագունտը կը հասնի մեր ու լամպարի մէջ եղած այն կետին, օրտեղից սկսուել էր նրա տեղափոխությունը:

Լուսնի դիրքերը.—Այսպէս անա, կրկնելով նմանօրինակ փորձը, դուք ստացած կը լինեք փոքր ձևով լուսնի դիրքերի երևույթը: Յիրաւի, լուսինը չէ կանգնած երկնքումը անշարժ—նա պտտում է երկրի շուրջը, ինչպէս ինքը երկիրը պտտւում է արևի շուրջը: Լուսինը իր ամէն մի շրջանը կատարելիս անց է կենում մեր և արևի միջովը, իւրաքանչիւր պտոյտի ժամանակ նա կանգնում է հակառակ դիրքով.

Իր դիրքերից առաջինի մէջ լուսինը, ինչպէս ասում են, արևի հետ միասած է չնում, այսինքն՝ մեր վերաբերությամբ այն կողմից է գտնւում, որ կողմից և արևը: Դուք իսկոյն կը նկատէք, որ երկրի վրայ գտնուած դիտողը կարող է տեսնել լուսինը այդ դրությեան մէջ միայն նրա մութ կողմից. սա կը լինի այն դիրքը, որ կոչւում է ծնունդ (Ծ. Լ.): Լուսնի այս դրությեան ժամանակ մենք սովորաբար, շատ պատճառներով, ոչինչ չենք նկատել: Առաջին պատճառն այն է, որ մենք կարող ենք դիտել երկնքում միայն այն, ինչ որ վայլում է: Ինչ մարմին որ մութն է, բոլորովին անտեսանելի է մեզ համար, քանի որ միախառնւում է երկնքի գոյնի հետ: Բացի դրանից՝ երբ լուսինը լինում է այն կողմում,

որտեղ և արևն էլ, նա լույս է ընկնում մեր հարևանի վրայ նրա հետ միասին մի և նույն ժամանակը և նրանից ոչ հեռի. նրանք ծագում ու մայր են մտնում մի և նույն ժամին (երկրի օրական շարժողության պատճառով): Այսպես, եթե լուսինը ունենար որքան և է լույս, այն ժամանակ արևի գառագայթների պատճառությամբ, այս գոյքում ևս նոր գործարք ընդունել կը լիներ մեր տեսողության համար:

Երբ լուսինը կատարում է իր ընթացքը, սկզբում նրա ծայրից երևում է լուսաւորուած կողմի մի փոքրիկ մասնիկը լույսի մի նեղ շերտի ձևով, որ շուտով փոխւում դառնում է մի մեծ կամ լիալուսին: Այս փայրկենին լուսինն արդեն բոլորովին չէ ուղղուած դէպի արևը: Երեկոյին, ցերեկեան լուսաւորի մայր մտնելուց վերոյ, լուսինը որ ամէն օր մի փոքր ուշանում է, դեռ ևս չէ ծագել: Լիալուսնի մեծությունը երևում է հարևանի ծայրին, իր կորնթարդ կողմով ուղղուած այն կողմը, որտեղ գտնում է արևը, այսինքն՝

դէպի արևմուտք, իսկ նրա եղջիւրները ուղղուած են հակառակ կողմը: Ամէն երեկոյ նա աւելի յայտնանում և ընդ նմին աւելի ուշ է մայր մտնում: Երբ լուսինը անցնում է իր ընթացքի առաջին քառորդը,... մեր առաջը բացւում է նրա լուսաւորուած կողքի ուղիղ կէսը, որ երևում է գիտողին իբրև մի փայլուն կիսաշրջան: Նրա կլորացած ծայրը ուղղուած է դէպի արևը, որ տակալին չէ ծածկուել մեր աչքից կամ արդէն մայր է մտել: Սա առաջին քառորդի է (Ա. Ք.): Առաջին քառորդի օրը, արևի մայր մտնելու պահուն, լուսինը գտնուում է իր տեսանելի ճանապարհի մէջտեղը և մայր է մտնում, իր երթին, մօտ կէս գիշերին: Նկատեցէք, որ լուսնի բոլոր գիրքերում նրա միայն փայլուն կողմն է երևում. իսկ ստուերային մասը համարեա բոլորովին աննկատելի է մեր աչքին: Թէկուզ՝ փոքր ինչ գիտելու համար այս կողմը, որ միայն լուսաւորուած է երկրի մի թեթև ցոլքից, պէտք է ձեռք առնել յայտնի նախազգուշութիւններ:

Ո՛րքան աւելի առաջ է շարժւում, այնքան լուսինը աւելի է բաց անում մեզ համար իր լուսաւորուած կողքը, կիսաշրջանը աստիճանաբար բոլորուելով լայնանում է, իսկ ստուերը չեռ է քաշւում դէպի հակառակ ծայրը։ Վերջապէս, երբ մոլորակը հասնում է ուղիղ արևի հանդէպը (հանդիպում), դէպի երկիրը ուղղուած է լինում բոլորովին նրա լուսաւորուած կողմը. այս է անա լրումը (Լ. Լ.)։ Ջրեղ, ճաճանչափայլ սկաւառակը երևում է մեզ այն ժամանակ բոլորովին բոլորուած։ Լուսնի լրման ժամանակը մոլորակը ծագում է երեկոյին, արևի հակառակ կողմից և այն՝ արդէն նրա մայր մտնելուց յետոյ։ Նա փայլում է ողջ գիշերը, հանդարտ ձգելով իր մեծ աղեղը աստղալից երկնքովը և մայր է մտնում միայն առաւօտը։ Յիրաւի, այս վայրկենին լուսինը գտնւում է ուղիղ արևի հակադիր կողմը. մենք պէտք է տեսնենք նրան այն բոլոր ժամանակը, քանի որ չենք տեսնում արևը և ընդհակառակն։ Յերեկը, այսինքն՝ երբ մենք

գտնւում ենք դէպի լոյսը ուղղուած կողմը, լուսինը ծածկւում է մեզնից երկրով հակառակ կողմից։ Նա գտնւում է երկնքի այն մասում, որ մենք չենք կարող տեսնել հորիզոնի տակը։ Սրա հակառակ, երբ երկրի պտտուելը պատճառով մենք կ՝անցնենք ստուերի կողմը, և արդէն չենք կարող տեսնել արևը, լուսինը լոյս կ՝ընկնի ուղիղ մեր հանդէպը։ Զաւ անհրաժեշտ է յուշադրութեան առնել այս տեսնը, որովհետև, ինչպէս արդէն ասուած էր, բաւական չէ միայն դիտել երևոյթները, այլ պէտք է պարզ ըմբռնել և նրանց պատճառը։

Այժմ, երբ լուսինը կը սկսի անցնել իր ընթացքի երկրորդ կէսը, մենք կը տեսնենք որ լուսաւոր մասը աստիճանաբար նուազում է, տեղի տալով ստուերին, որպէս նա ծածկւում է։ Մի քանի գիշեր անցնելուց յետոյ՝ մենք արդէն միայն լուսաւորուած կողմի կէսը կը տեսնենք—դա կը լինի Ջրջին (Վ. Ք.)։ Նրա կազմած կիսաշրջանը առաջուայ պէս իր կորնթարդ կողմով ուղղուած է դէպի արևը, բայց լուսինը

ծագում է այժմ միայն կէս գիշերից յետոյ, առաւօտը։ Արևը, որ պէտք է երևայ մի քանի ժամից յետոյ, արդէն գտնւում է իր ծագման կողմը. ահա թէ ինչու լուսնի սկսառակի լուսաւորուող մասը այս անգամ ուղղուած կը լինի դէպի արևելք։ Ապա լուսնի խաւար մասը աստիճանաբար բռնում է լուսաւորուած մասը, որ հետզհետէ յետ է քաշւում դէպի ծայրը։ Սրանից յետոյ առաւօտները արևելքում երևում է արդէն միայն մի նեղլիկ փայլուն շերտ՝ մանգաղի ձևով, նման կիսալուսնին, բայց հակառակ կողմը թեքած եղջիւրներով։ Նա հետզհետէ նրբանում ու կարճանում է, մինչև որ բոլորովին կ'անհետանայ այն վայրկենին, երբ լուսինը կը վերադառնայ վերջապէս իր առաջին դրութեանը մեր և արևի մէջը։ Սրանից յետոյ սկսւում է նոր շրջան մի և նոյն դիրքով, նոր լուսնային ամիս։ Այս վերջին խօսքերով զօրութեամբ հասկացւում է լուսնի՝ երկրի շուրջը կատարած լրիւ շրջանը, լրիւ պտոյտը, որ շարունակւում է համարեա մի ամիս

(29½ օրից աւելի)։ Այսպիսով, մի ամսուայ ընթացքում վերանորոգւում ու վերստին վերջանում է լուսնի դիրքերի լրիւ կարգը կամ տեսքերի փոփոխութիւնը։

Լուսնի շարժողութիւնը արևի շարժողութեան պէս միայն թուացող շարժողութիւն չէ, այլ կատարւում է իրօք։ Լուսնի ծագումն ու մուտքը ամէն օր երեք քառորդ ժամից մի փոքրը աւելի ուշանում է։ Եթէ լուսինը անշարժ լինէր արևի պէս, այն ժամանակ մենք տեսնելով այսօր նրան ծագելիս մի յայտնի ժամում,—վաղը, երկրի լրիւ պտոյտից յետոյ, մենք պէտք է տեսնէինք նրան բոլորովին այն մի և նոյն ժամին և մի և նոյն դրութեամբ։ Սակայն, քսան ու չորս ժամ անցնելուց յետոյ, երբ երկիրը կը լրացնի իր օրական պտոյտը, նրան անհրաժեշտ է կատարել դարձեալ իր շրջանի որ և է մի մասը, որպէս զի լուսինը բացուէր մեր առաջը։ Այս նշանակում է. լուսինը յետ մնաց, նրան կը հարկաւորուի ետևից ընկնել։. Այս-

պէս ուրեմն, լուսինը շարժւում է, իրօք պտտւում է երկրի շուրջը, մինչ անգամ աւելի՝ նա պտտւում է երկրի ներսի շրջագծոց շրջագիծը, հետևապէս, արևի պտտելի շրջագիծն հակառակ կողմը։

Բացի սրանից, երկնքի մեծ օրէնքերից մէկը, բոլոր լուսաւորների համար ընդհանուր երևոյթը կայանում է նրանում, որ փոքր մոլորակները պտտւում են մեծերի շուրջը, և ոչ թէ մեծերը փոքրերի շուրջը. մի փոքր յետոյ մենք կը բացատրենք սրա պատճառը։ Երկիրը չափազանց փոքր է արևից և պտտւում է արևի շուրջը. լուսինը, իր երթին, փոքր է երկրից և պտտւում է նրա շուրջը։

Իր մեծութեանը նայելով լուսինը 50 անգամ փոքր է երկրից կամ, ուրիշ խօսքերով, պէտք է տասաքեր միասին 50 լուսին, որ կազմուի երկրի ծաւալը։

Այսպէս էլ, երկրի համեմատութեամբ, լուսինը աւելի պակաս թանձրութիւն ու պակաս ծանրութիւն ունի. բան ճիշտ հաշուի լուսինը 80 անգամ պակաս է կշռում երկրից։

Ինչպէս արդէն մենք նկատեցինք, գիշերային լուսաւորի սկզբանակը երևում է մեր աչքին համարեա նոյն պահանջով, ինչպէս և գիշերային լուսաւորը։ Այս նրանից է, որ լուսինը թէպէտ և նշանաւոր կերպով փոքր է արևից, բայց մի և նոյն ժամանակը նա նշանաւոր կերպով էլ պակաս է հեռու մեզնից։ Երկրի և լուսնի միջ եղած հեռաւորութիւնը ընդ ամենը միայն 360,000 վերստ է (360,533)։ Ի հարկէ, այսպիսի հեռաւորութիւնն էլ կարող է մեզ անհագին թուալ։ Այն. այդ ուրիշ կը լինի մեր և մեզ շրջապատող երկրաւոր առարկայի վերաբերութեամբ, բայց երկնային մարմինների, արևի ու միւս լուսաւորների մեծութեան ու մեզնից ունեցած հեռաւորութեան վերաբերութեամբ—սա շատ չէ, և մենք կարող ենք ասել, որ լուսինը մի այնպիսի լուսաւոր է, որ մեզ հետ մերձաւոր դրացիութեան մէջ է գտնուում։ Ուստով մենք կը բերենք մի քանի համեմատութիւն, որոնք մեզ

աւելի ճիշդ հասկացողութիւն կը տան այս հեռաւորութեան վրայ։

Գիտենալով լուսնի հեռաւորութիւնը, կարելի է հաշուել այն բոլոր ճանապարհի երկայնութիւնը, որ անցնում է լուսինը արևի շուրջը, այսինքն՝ նրա շաւղի երկայնութիւնը. և որովհետև յայտնի է և՛ այն ժամանակը, որ գործ է դնում լուսինը իր ընթացքը անցնելու վրայ, ուստի գտել են, որ լուսինը տարւում է տարածութեան մէջ մի մանրերկրորդում մօտ մի վերստի արագութեամբ։

Բացի դրանից՝ չպէտք է մոռանալ, որ այն ժամանակը, երբ լուսինը պտտւում է երկրի շուրջը, այդ վերջինը պտտւում է արևի շուրջը։ Այս երկու շարժողութիւններն էլ կատարւում են միաժամանակ։ Ի՞նչպէս։ Երևակայեցէք, որ զբօսանքի ժամանակ, երբ հասակաւոր մարդը գնում է չափաւոր քայլով, մանուկը, գնալով նրա ետևից, պտտւում է նրա շուրջը, կարելով նրա ճանապարհը հետևապէս երբեմն առաջից, երբեմն ետևից։ Ահա այս կերպով

էլ, լուսինը պէտք է վազէ երկրի ետևից կտրելով նրա ընթացքը, և բացի դրանից պէտք է պտտուի նրա շուրջը։ Այսպէս ասա լուսինը հետևում է մեր մոլորակին երկնային տարածութեան մէջ, ինչպէս հաւատարիմ ընկերը, կամ աւելի ճիշտ, ինչպէս ծառան հետևում է իր տիրոջը, որև իսկապէս արտայայտում են „լուսինը երկրի արբանեակն է“ խօսքերով։

ԼՈՒՍՆԱԿԱՆ ԱՂԽԱՐՀ

Սովորական այսով դիտած լուսինը.— Երևակայեցէք մի հիանալի ամարային երեկոյ։ Արդէն ուշ է. անցել է մի քանի ժամ արևի մայր մտնելուց յետոյ։ Ցերեկուայ տապը փոխուել է երեկոյեան զովութեան՝ թեթև հովմից թարմացած։ Ամեն ուրիշ լուռ ու հանդարտ է, կարծես, ամէն բան քուն է մտել շուրջդ։ Երկնքում լոյս է տալիս լրացած լուսինը, ցոյց տալով մեզ իր արծաթեայ սկաւառակը։ Տեղ տեղ վառւում են երկնակամարում մի քանի

աստղիկ, առաւել փայլուններից, և նրանց ցոլքը ասես թէ սքօղուած է մի շղարշով. մնացածների աւելացումը նսեմանում է լուսնի աւելի պայծառ ցոլքից։ Լուսնը այսպիսի գիշերուայ թագուհին է դառնում։

Դիտարեցնելով բոլոր-ապես մեր հայեացքը այդ լուսաւորի վրայ, որ ուղարկում է մեզ քնքուշ, սպիտակ լոյս, մենք կը նկատենք, որ այդ սկաւառակը ամէն տեղ չէ փայլում միատեսակ պայծառութեամբ։ Մի քանի, առաւել լուսաւորուած տեղերը մեզ մոխրագոյն են թւում, ունենք բծերի նմանութիւն։ Այս անկանոն գաստաւորուած բծերը, ընդհանուր առմամբ դիշեցնում են գէմքի պէս մի ինչ-որ բան։ Բայց հէնց որ կը նայենք մենք լուսնին հեռադիտակով, գէմքի ամենայն նմանութիւնը բոլորովին ոնչայտանում է, որովհետև այս ժամանակ աւելի պարզ են նկարւում մանրամասնութիւնները։ Լուսաւորը նշանաւոր կերպով մեծ է թւում, որովհետև աւելի է մօտենում մեզ, և այն

ժամանակը շատ պարզ կարելի է գիտել այն, ինչ որ չէ ընկնում հասարակ աչքի գիտողութեան տակ։

Հեռադիտակի միջոցով երևեցած լուսնի պատկերը։

—Լուսնի մակերևոյթը երևում է շատ անարթ։ Մի քանի տեղ աչքի են ընկնում բարձր լեռներ։ միւս, առաւել մակերես տարածութիւնները կազմում են ընդարձակ հովիտներ։ Այս բոլորը զարմանալի կերպով լաստ են երևում. հեռադիտակով կարելի է պարզ որոշել լուսնի վեայ եղած լեռներն ու հովիտները, ձորերն ու անդունդները։ Միայն այն մտածեցէք, որ ամենատաւ ու ամենամեծ հեռադիտակների միջոցով լուսինը այնպէս է երևում, որ ծ-ոնչ-ոնչ մօտեցել է մեզ 200 վերստ (200 վերստ հեռաւորութիւն փոխանակ 360,000-ի), այսինքն՝ դուք կը տեսնէք նրան այնպէս, ինչպէս տեսնում էք բարձր լեռներն ու հորիզոնի մեզ շրջապատող տեղը։

Լուսնի մակերևոյթը ուսումնասիրել են աստղաբաշխները առանձին ջանադրութեամբ. սմէն լեռ, ամէն հովիտ,

ամէն սարահարթ նկարուած, քննուած, չափուած է։ Ի՛նչպէս որ կազմուում են աշխարհագրական քարտէզները, ձևակերպւում են երկրի այլ և այլ կողմերը, ուղիղ այնպէս էլ կազմել են և լուսնի երեսը։ Վերջին ժամանակներս մինչ անգամ նրա լուսնիցն էլ են հանել, ինչպէս որ հանում են որ և է մարդու պատկերը։ Վերջապէս, կարելի է ասել որ՝ մենք լուսնին այնպէս լաւ ենք ճանաչում, էքչ մնաց մոտենք լինենք։

Լուսնի հետազօտութիւնը երբից։—Ուղեղութիւնը ջէպի լուսինը։—Իհարկէ, սա մի շատ հետաքրքիր ճանապարհորդութիւն կը լինէր։ Զատ դիւրեկան կը լինէր թռներ ունենալ և թռչել այնտեղ... կամ թռկուզ, բարձրանալ այնտեղ օդապարիկով։ Բայց, յաւակցաբար, այս անկարելի է։ Երկրի մակերևոյթից մի քանի վերստի վրայ արդէն չկայ օդ, որ անհրաժեշտ է ինչպէս շնչառութեան նոյնպէս և գնդի բարձրանալու համար։ Ուստի ոչ ոք և ոչ մի ժամանակ չի կարող լինել լուսնի վրայ։ Սարսափելի տխուր բան։

Բայց եթէ մեր մարմինը չի կարող բաժանուել երկրից, գոնէ մեր միտքը կարող է ազատ թռչելանել, ուր կամենայ և անարգել հասնել ամենահեռաւոր սահմանները։ Միթէ դուք պարզ չէք երևակայում բաները, երբ յիշում էք նրանց։ Երբ ձեզ յայտնի է որ և է առարկայի ձևը, գոյնը, արտաքին տեսքը, այն ժամանակ միթէ իսկոյն չէ՞ ներկայանում ձեզ նոյն իսկ այդ առարկայի պատկերը։ Այսպէս, ուրեմն, փորձենք մի այսպիսի երևակայական ճանապարհորդութիւն անել ջէպի լուսինը... որի ժամանակ երևակայելը կը լինի, ի հարկէ, միայն ինքը ճանապարհորդութիւնը, և ոչ դիտուող բաները, որովհետև յայտնի է որ՝ նրանք մեզ կ՝երևան այնպէս, որպէս թէ կան իսկապէս։

Եթէ այսպիսի ճանապարհորդութիւն անելու համար մենք վերառնենք երկաթուղու մեծ արագութիւն ունեցող (38 վերստ մի ժամում) մի գնացք, այն ժամանակ մեզ կը հարկաւորուի չորս հարիւր օր—մի տարուց աւելի

ժամանակ։ Այս շատ երկար է։ Եթէ կարելի լինէր կպչել՝ հնամարեա երկու մանրերկրորդում մի վերստ թռչող թենդանօթի ռումբին, այն ժամանակ մեզ կը հարկաւորուէր ճանապարհին լինել տասերեք ժամ և մենք կարող էինք վերադառնալ միայն հետևեալ օրը։ Այս բոլորը ցնորք (ֆանտազի) է, ի հարկէ։ Բայց դա բաւական նպաստում է այ անագին հեռաւորութեան բացատրութեանը — մեր վերաբերութեամբ — որ բաժանում է լուսինը երկրից։ Լոյսը, սակայն, աւելի արագ է տարածւում, քան ուրիշ որ և է բան։ Լուսնից ցոլացած ճառագայթի լոյսը հասնում է մեր աչքին մի մանրերկրորդից մի փոքր աւելի ժամանակում։ Մեր միտքն էլ կարող է անցնել այդ տարածութիւնը հէնց այդպիսի արագութեամբ։ Ուրեմն, ճանապարհ ընկնենք։ Ահա մենք արդէն հասանք էջ։

Լուսնի լեռները — պատմաբանները — Մենք այժմ գտնւում ենք մի քարքարոտ մակերևոյթի վրայ, որտեղ կուտակուած են անագին վէմեր, թափթփուած

միմեանց վրայ քանդուած պատի քարերի նման։ Մեր շուրջը հեռագնեակ եր և ռումեն բարձր լեռներ, սրածայր, գագաթներ, ատամնաւոր լեռնաշղթաներ։ Բարձրանանք ամենաբարձր լեռներից մէկը։ Հասնելով գագաթին՝ կը տեսնենք որ լեռը ունի խոռոչ։ Մեր հայեացքը կորչում է անդունդի մէջ։ Մենք գտնւում ենք հրաբուխի կամ աւելի ճիշդ՝ նրա քէրոնի վրայ։ այս բերանը խորն է, անբռնվանդակելի, բայց վաղուց մարել է։ հրաբուխն այլ ևս լաւա չէ ժայթքում։

Այն լեռը, որի վրայ մենք բարձրացել ենք, լուսնի բարձրագոյն լեռներից մէկն է։ նա մօտ 6 վերստ բարձրութիւն ունի։ Այստեղից մենք իշխում ենք բոլոր հեռաստանի վրայ։ Մեր ոտքերի տակը տարածւում են դժուարակոխ գաւիսվայրեր, խորին հովիտներ, ժայռերի կարկատներ, պատատուած քներ, անդունդներ։ Մեր շուրջը, որքան աչքերս կարող են կարել, գտնւում են լեռներ, հրաբուխներ, հրաբխային բերաններ — հրաբխային բերան։

ներ, և ուրիշ ոչինչ։ Նրանցից մի քանիսը երկրի վրայ եղած հրաբուխների պէս այնքան էլ ընդարձակ չեն, իսկ մի քանիսը վիթխարի են, խորը և շրջապատուած, ասես թէ պարսպապատ, ատամնաւոր փոցխերով, որոնք կազմում են այսպէս անուանուած պատուանները։

Լուսնի լեռները շատ բարձր են։ Մեծ մասամբ նրանք ունեն 4½-ից մինչև 5½ վերստ բարձրութիւն, այսինքն՝ բարձր քան Մոնբլանը, որ Եւրոպայի բարձրագոյն լեռներից մէկն է։ Դոքքէլ էնը (լուսնի լեռներին ևս մեր լեռների պէս տրւում են առանձին անուններ) 7 վերստից աւելի կամ 25,000 ոտնաչափ բարձրութիւն ունի. Նիւտոն էնը՝ մօտ 24,000 ոտնաչափ բարձրութիւն։ Սա համարեա հաւասարւում է երկրի ամենաբարձր լեռներին։ Բայց որովհետև լուսինը բաւական փոքր է երկրից, համեմատաբար այս լեռները նշանաւոր կերպով բարձր են մերիններից։ Օդաձև պատուարների նման հրաբխային բերանները

աւելի սարսափեցուցիչ բարձրութիւն ունեն. նրանցից մէկը, Կլաւիուսի հրաբերանը, մօտ 200 վերստ լայնութիւն ունի. նրա շուրջը պատրեալու համար կը հարկաւորուէր երկու շաբաթից աւելի։

Լուսնի լեռները բաղկացած են կաւհանման սպիտակաւուն քարից։ Արևի ճառագայթների ազդեցութեան տակ, այս քարը փայլուն է երևում՝ սպիտակ պատի նման, որից արձակուող լոյսի չափազանց պայծառ ցոլքը ստիպում է մեզ աչքերս կորցնել։ Ահա թէ ինչու երկրից երևացող լուսնային գաւառները մեզ աւելի փայլուն են երևում. հէնց նրանք են իսկապէս սկաւառակի ամենապայծառ մասները։ Ընդհակառակն, ընդարձակ դաշտավայրերի մակերևոյթը երևում է աղօտ։ Նա չորացած գորշագոյն ցեխի տեսք ունի։ Աւելի մոյգ գոյնի դաշտավայրերի գաւառները կազմում են այն ջրերը, որ մենք նկատում ենք լուսնի սկաւառակի վրայ։

Մի հայեցող լուսնի դաշտավայրերի վրայ.

Որի որ Լրի Բոցոլոյոուլեան հեռաձգները, —Բայց ինչպիսի տխուր ու ամայի տեսք ունեն այն օտարոտի դաշտանկարները, որ նոր ահա յայտնագործեցինք մենք։ Այս նրանից է առաջ գալիս, որ այն տարօրինակ երկրումը, որի մէջ մենք ճանապարհորդում ենք, չկայ ամենևին ոչ օդ, ոչ ջուր։ Իսկ եթէ ոչ օդ կայ, ոչ ջուր, ի հարկէ, չեն կարող լինել և գոլորշիներ, հետևապէս և՝ ամպեր։ Ոչինչ բան չէ կակղացնում ու թուլացնում արևի ճառագայթները. այստեղ երբէք չէ լինում այնպէս, ինչպէս երկրի վրայ, երբ ախորժ տաքուկ ցերեկը գգւում է իր զովութիւնով իր վրայ եղած բոլոր առարկաները։ Արևն այստեղ շլացուցիչ է, և մի և նոյն ժամանակ կիզիչ։ Ներս մտէք ժայռի ստուերը—դուք ոչինչ չէք տեսնի և կը բռնուէք ցրտից։ արեգունի կողմից ժայռը լուսաւորւում է սաստիկ պայծառ, իսկ հակառակ կողմից թագաւորում է թանձր խաւարը։ Չկայ ոչ մի ՀՈՍՈՊՈՒԵՐ և հեռաստանում չէ երևում ոչ կապուտակու-

թիւն, ոչ գոլորշիների գորշագոյն ծխի նշան, ինչպէս դիտւում է երկրի վրայ, որովհետև այդպիսի տեսք ստանում են հեռաւոր առարկաները միայն օդ լինելու շնորհիւ։ Բարձր լեռների վրայ ո՛ ձիւն կայ այստեղ, ոչ սառցակոտորներ՝ չկայ ոչ մի հեղեղ հեղեղատների մէջ՝ կամ գետ՝ հովիտների խորքում։ Չկա՛ ոչ ծով, ոչ լիճ։—Այսուամենայնիւ, քանի որ այս տակաւին չէր ստուգուած, այն ահագին դաշտավայրերը, որոնք լուսնի սկաւառակի վրայ կազմում են մոխրագոյն բծեր, կուլուում էին ծով։ Այսպիսով սատցել են այս անունները՝ Մինչբրիսոն ծով Փոլոբինեբի ովկիանոս Ընպոպոէսոլեան լիճ, Մեբերի ճահիճ։ Այս անունները պահպանուել են և դասօր, թէպէտ այժմ շատ լաւ է յայտնի, որ այս հսկայաւոր ծովերի մէջ ոչ մի կաթիլ ջուր չկայ. որոնք ոչ այլ ինչ են, բայց եթէ՝ անսանման անապատներ։ Ամենուրեք մերկ գետնի՝ երկ ժայռեր։ Չէ՛ երևում ոչ անտառ, ոչ մարգագետին, և կարելի է ենթադրել, որ լուսնի վրայ չկայ ոչինչ բուսա-

ՀԱՆՈՒԹԻՒՆ, քանի որ ոչ մի բոյս չէ կարող գոյութիւն ունենալ առանց ջրի ու օդի. մանաւանդ այնտեղ չէ կարող լինել ոչ կենդանի, ոչ բնակիչ։ Սակայն այս բանը այդուամենայնիւ հաստատել չէ կարելի, որովհետև շատ կարող է պատահել, որ այս ինքնակերպ մոլորակի վրայ գտնուում է օդի մի յատնի քանակութիւն, թէպէտ և այնքան աննշան՝ որ մենք չենք կարող զգալ այն՝ 360,000 վերստ հեռաւորութիւնից։ Բայց եթէ մէկ ասենք թէ լուսնի վրայ օդ կայ,—նրա վրայ կարող է լինել և կենք։ Այս դէպքում նրա վրայ բնակութիւն հաստատած արարածները պէտք է բոլորովին տարբեր լինեն մեզնից և կարող են կառավարուել առանց այն բանի, որ անհրաժեշտ պիտոյքն է երկրի վրայ եղած բոլոր գործարանաւոր աշխարհի։

Լուսնի վրայ օդ ու ջուր չլինելու հետևանքները.—Պակաս զարմանալի չեն և՛ լուսնային կեանքի միւս պայմանները. այնտեղ չէ լսւում ոչ մի աղմուկ, ոչ մի ձայն։ Ինչու։ Որովհետև ձայնը

ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ ցնցուող շարժողութիւն, օդի տատանում։

Այնտեղից, ուր օդ չկայ, ձայնը չէ կարող հասնել մեր ականջին։ Ֆիզիկայի դասերի ժամանակը այս առիթով մի շատ հետաքրքիր փորձ են անում. մի փոքրիկ զանգակ են կախում մի դատարկ ապակեայ ամանի մէջ. մի առանձին օդատանով դուրս են հանում օդը այս ամանից և ապա քաշում են զանգակը, երևում է, ինչպէս լեզուակը գիպչում է զանգակի պատին, բայց ոչինչ —ոչինչ չէ լսւում, բոլորովին ոչինչ։ Լուսնի վրայ էլ տեղի է ունենում նոյնը, ինչ որ՝ այս ամանում։ Երևակայեալ ճանապարհորդները, եթէ կամենային խօսել միմեանց հետ, զուր պէտք է շարժեին շրթունքները--նրանց միջից չպէտք է դուրս դար ոչ մի ձրպտուն։ Եթէ քանդուէր մի սար, դուք չէք լսի ոչ մի ձայն, ոչ մի ամենափոքր շշուկ... Ա—յսինքն՝ լուսնեան աշխարհն է։

Երբեմն դեռք լուսնի վրայից.— Բարձրացնենք այժմ մեր աչքերը դէպի եր-

կինք։ Ի՞նչ զարմանալի տեսք ունի երկինքը լուսնի վրայից։ Մենք չենք նկատի այստեղ որ և է բան այն կապոյտ կամարի նման, որ կազմում է երկրումը մեր գլխների վերևը եղած օդը։ Ահա, օրինակ, մի պայծառ օր՝ շլացուցիչ արևով և, չնայելով դրան, երկինքը երևում է մեզ մի անբովանդակելի սև տարածութեան նման բան, որի վրայ ամենուրիք սփռուած են զարմանալի գոյներով թարթափող աստղեր։ Աստղե՞ր՝ օրը ցերեկով։ Դարձեալ, ի՞նչ բան է երկնքումը այն շքեղ, փայլուն սկաւառակը, նման լուսնին, բայց չորս անգամ մեծ այն սկաւառակից, որ վերևից լուսաւորում է մեր գիշերները. երկրի վրայ։ Այդ սկաւառակը նոյնպէս բծերաւոր է. նայեցէք, այստեղ երևում է մի մեծ դեղնաւուն եռանկիւնի՝ կանաչաւուն տեղի (ֆոնի) վրայ. բայց ի՞նչ բան է։ Չէ՞ք ճանաչում դուք արդեօք այն եղերագծերը (կոնտուրները), որ մենք այնքան անգամ ուսումնասիրում էինք գլոբուսի վրայ. ահա մեծ եռանկիւնին—Աֆրիկան. ահա Ասիան,

Եւրոպան, ահա և Ռուսիան։ Ահա մեծ ծովերը։ Այս փայլուն գունդը, այս անագին լուսինը... ո՞չ ապաքէն սա երկիրն է։

Այո, իրաւի, դա երկիրն է։ Լուսնից երևացող երկիրը նոյնպէս փայլուն է թւում, ինչպէս և ինքը երկրից երևացող լուսինը։ բացի գրանից՝ որովհետև երկիրը մեծ է լուսնից, ուստի և նա զգալի կերպով (14 անգամ) աւելի է լուսաւորում։ Լուսնից երևացող երկիրը ունի նոյնպէս իր գիրքերը, որովհետև նոյնպէս լուսաւորուելով արևից, նա նոյնպէս ունի լուսաւորուած ու ստուերարկուած կողմ։ Միայն երկրի գիրքերը միշտ հակադիր կը լինեն լուսնի գիրքերին։ Այսպէս, երբ երկրի վրայ լուսնի ծնունդն է, այն ժամանակ լուսնի քնակիչները, եթէ կան, կը տեսնեն ուղիղ երկրի լուսաւորուած կողմը. նրանց համար այն ժամանակը կը լինի լրի՞ն էրլի... Երբ մեզանում կը լինի լուսնի առաջին քառորդը, նրանցում կը լինի երկրի վերջին քառորդը, լուսնի լրմանը կը համապատասխանի

երկրի ծնունդը և այն։ Դարձեալ, որովհետև երկիրը պտտւում է իր վրայ մի օրում, ուստի լուսնի ենթադրեալ բնակիչների աչքի առաջը քսան ու չորս ժամուայ ընթացքում մէկը միւսի ետևից կ'անցնեն մայր ցամաքներն ու ծովերը. նրանց համար դրանք մի առանձին տեսակի ժամեր կը լինեն։

Մեր՝ դէպի լուսինն արած ճանապարհորդութիւնը վերջացնելու համար, նկատենք դարձեալ, որ լուսնի վրայ գտնուած առարկաները բաւական թեթև են, քան երկրի վրայ, այսինքն՝ որ այն ոյժը, որով նրանք ձգւում են լուսնի մակերևոյթի վրայ, բաւական պակաս է այն ոյժից, որ ստիպում է առարկաներին ընկնել երկրի վրայ և կպած է պահում նրա վրայ ծանր մարմինները։ Այսպէս, օրինակ, այն կտոր քարը, որ երկրի վրայ կշռում է մօտ 50 փութ, այստեղ, լուսնի վրայ, եթէ դուք փորձէք նրան բարձրացնել, մի կտոր մեղրամոմ կը թուի ձեզ. նրա ամենամեծ չափը կարող է լինել 37—39 գրուանքայ։ Մենք ինքներս՝ որ

ճանապարհորդում ենք երևակայութեամբ այս զարմանալի աշխարհում, զարմանալի թեթևութիւն կը զգանք մեզ վրայ։ բաւական է մի լաթ թռչէք անել, որ կարողանանք ոստանուլ հազարոյտի վրայից մի տան բարձրութեամբ։ Այս բոլորը առաջ է գալիս նրանից, որ լուսինը բաւական փոքր է երկրից. նրա բաղադրիչ նիւթերն էլ բաւական թեթև են այն նիւթերից, որոնցից բաղկացած է երկիրը։ Ունենալով բաւական փոքր ծաւալ քան երկիրը՝ լուսինն էլ բաւական թոյլ է ձգում դէպի ինքը իր վրայ գտնուած առարկաները։

ԼՈՒՍՆԻ ԶՐՋԱՊԱՐՀ ՇԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ։

Ուշադրութեամբ դիտելով լուսնի բծերը՝ կարելի է նկատել, որ նրանք միշտ բռնում են մի և նոյն տեղը. լուսնի այլ և այլ փիրքերում նրանք ծածկւում են ստուերով կամ ազատւում են նրանից, բայց մնում են ան-

շարժ։ Լուսինը ցայց է տալիս մեզ միշտ մի և նույն կողմը։ Որովհետև լուսինը պտտուում է երկրի շուրջը 29 օրում, ուստի նա հենց այսպես ժամանակում էլ պէտք է մէկ պտոյտ անի իր շուրջը, որպէս զի շուրջ գայ մեր կողմը միշտ մի և նույն կողմով։

Սա կարող է օտարոտի թուալ և առաջին հայեացքով տեղի տալ այսպիսի նկատողութեան. „Եթէ լուսինը մեզ միշտ մի և նույն կողմն է ցոյց տալիս, նշանակում է նա չէ պտտուում իր շուրջը. եթէ ոչ՝ մենք կը տեսնէինք հետզհետէ նրա բոլոր կողմերը“։—Այո. ըստ երևոյթին, այդ այդպէս է։ Բայց խորհենք մի փոքր։

Ի՞նչ է նշանակում պտտուել իր շուրջը։ Ենթադրենք թէ դուք կանգնած էք դաշտի մէջտեղը։ Առաջ չգնալով ձեր կանգնած տեղից՝ դուք պտտուում էք միշտ մի և նույն կողմը, այնպէս որ հետզհետէ նայում էք դէպի հորիզոնի բոլոր կետերը—պտտուում էք ձեր իսկ շուրջը։ Այժմ մի ուրիշ փորձ անենք։ Երևակայենք գետնումը խրած մի սիւն և երևակայենք որ դուք պտտուում էք այդ սիւնի շուրջը, դարձնելով միշտ դէպի նրան ձեր երեսը։ Այն ժամանակը, երբ դուք պտտուեցիք սիւնի շուրջը՝ դուք նույնպէս պտտուել էք և ձեր իսկ շուրջը, որովհետև սիւնը շարունակ տեսնելու համար՝ ձեզ անհրաժեշտ էր հետզհետէ նայել դէպի հորիզոնի ամէն կետերը, այսինքն՝ էլի այնպէս, ինչպէս առաջին դիտողութեան ժամանակը։ Բոլորովին նույնն է պատահում և լուսնին. որպէս զի պտտուելով երկրի շուրջը, դնի միշտ նրա դիմացը իր մի և նույն կողմը՝ նա անպատճառ պէտք է հետզհետէ շուրջ ու մուրջ տայ այս կողմը դէպի տարածութեան բոլոր կետերը. հետևապէս նա պտտուում է իր շուրջը ուղիղ այն ժամանակը, որ անհրաժեշտ է նրան երկրի շուրջը պտոյտ անելու համար։

Այստեղից առաջ է գալիս երկու հետևանք։

Առաջին՝ մենք ոչ մի ժամանակ չենք տեսել ու երբէք էլ չենք տեսնի լուս-

նի միւս կողմը։ Նա մեզ համար կը մնայ ընդ միշտ անչայտ։

Երկրորդ՝ որովհետև լուսինը պտտւում է իր շուրջը արևի առաջը մի ամսուայ ընթացքում, ուստի հէնց այս ժամանակում էլ նա հետզհետէ հակադրում է արևին իր մակերևոյթի բոլոր կետերը։ Այստեղից երևում է, որ մի ամսուայ ընթացքում լուսնի վրայ եղած ամէն մի տեղը կը գտնուի երկու շաբաթ լոյսի և երկու շաբաթ ստուերի մէջ։ Ուրիշ խօսքով՝ լուսնի, ինչպէս և երկրի վրայ լինում են իրանց ցերեկներն ու իրանց գիշերները՝ այն զանազանութեամբ միայն, որ ցերեկները այնտեղ տևում են համարեա երկու շաբաթ, այսպիսի տևողականութիւն էլ ունեն և գիշերները (աւելի ճիշդ՝ 14 օր և 18 ժամ)։ Ի՞նչ գիշերներ ու ինչ ցերեկներ։ Արևը համարեա մի ամբողջ ժամ է գործ դնում ճաղելու համար. ցերեկը դալիս է յանկարծ, առանց արշալոյսի։ Իսկոյն, հէնց որ ելնում է երևալ արևը, յանկարծակի վրայ է հասնում պայծառ օրը.

լեռների կատարները արդէն լուսաւորուած փայլում են. բայց հովիտները տակաւին խաւարի մէջ են։ Փոքր առ փոքր արևի ճառագայթները թափանցում են նրանց խորքը և հրաբխաբերանների յատակը։ Ցերեկը այնքան երկար է, որ ջերմութիւնը կուտակւում է, հետզհետէ աճելով, և վերջապէս աւելի է բարձրանում, քան որքան անհրաժեշտ է ջրի եռացման համար։ Ապա, երբ վրայ է հասնում գիշերը, այն ժամանակ այդ լինում է արագ, առանց աղջամուղջի մութ, սառուցիչ գիշեր։ այսպիսի երկար գիշերուայ ցուրտը նոյնքան զարհուրելի է, որքան անտանելի է ցերեկուայ տապը։ Ո՛չ ոք մեզնից չի կարող տանել կեանքի այսպիսի պայմաններին, մանաւանդ թէ, երբ անկարելի է ո՛չ շնչել, ոչ ուտել։ Այս բոլորից դուք տեսնում էք, որ աւելի լաւ է քնակել երկրի, քան թէ լուսնի վրայ։

ՕՐԱՑՈՅՑ

Այն կանոնների հաւաքումը, որոնցով կարգաւորում են ժամանակի չափերը, կոչւում է օրացոյց:

Մեզ արդէն յայտնի է, որ երկրի՝ իր առանցքի վրայ պտտուելը կարգաւորում է ցերեկուայ (և նրան հետևող գիշերուայ) տևողութիւնը: Ժամանակի այս միջոցը բաժանւում է 24 հաւասար մասների, որոնք կոչւում են ժամ. իւրաքանչիւր ժամը բաժանւում է 60 րոպէի. իւրաքանչիւր րոպէն՝ 60 մանրերկրորդի: Ժամանակի այն փոքրիկ միջոցների չափը, որոնք կարգաւորում են մեր կեանքը, մեր ցերեկուայ պարապմունքները, տալիս է մեզ հետևաբար երկրի շարժողութիւններից մէկը: Միւս կողմից՝ երկրի շարժուելը արևի շուրջը պայմանաւորում է տարուայ զանազան ժամանակները, իսկ այս պտտուելու տևողութիւնը տալիս է մեզ ժամանակի մի նոր չափ—տարի: Այսպէս ուրեմն, այն ժամանակի աւելի տևողական միջոցների չափումը, ո-

րոնք կարգաւորում են դաշտային աշխատանքները, որոնք թոյլ են տալիս մեզ նշանակել պատմական անցքերը, և թուել մեր սեպհական գոյութեան տևողութիւնը, կրկին տալիս է մեզ երկրի միւս շարժողութիւնը:

Տարուայ իսկական տևողութիւնը—Առաջինը, որ անհրաժեշտ է լաւ գիտենալ, —դա տարուայ իսկական տևողութիւնն է: Տարին ունի 365 օր, հաստատելով սրանով, որ երկիրը արևի շուրջը պտտուելու ժամանակը 365 լրիւ շրջան է անում իր շուրջը: Եթէ տարին բոլորովին ճիշդ պարունակէր իր մէջ 365 օր, այն ժամանակ հաշիւը շատ պարզ կը լինէր. որքան տարի, այնքան էլ 365 օր կը լինէր: Բայց տարին ճիշդ 365 օրից էլ բաղկանում. տարին պարունակում է իր մէջ 365 օր 5 ժամ 48 րոպէ և 48 մանրերկրորդ, կամ մօտաւորապէս 365 օր 6 ժամ, այսինքն 365¼ օր: Դուք այս րոպէիս կը տեսնէք թէ, որքան դժուարութիւններ ու թիւրիմացութիւններ է պատճառել այս անբաղդ քառորդ օրը:

Ենթադրենք նախ և առաջ, որ գա լնտարի չէ առնուում, և տարին հաշուենք միայն 365 օր։ Այսպէս էին վարուում նախնի եգիպտացիք, որոնք սակայն լաւ աստղաբաշխներ էին, նայելով իրանց ժամանակին։ Այսպիսով մեր տարին մի քանի ժամով կարճ կը լինի աստղաբաշխական տարուց։ Դուք կը տեսնէք թէ ինչ կարող է առաջ գալ սրանից։

Քառորդական տարուց՝ չորս-իլը տարեաշխատ տարուց—Օրերը հաշուենք տարուայ որ և է որոշ ժամանակից, օրինակ՝ գարնանային գիշերահաւասարից, որ այս տարի (1889 թ.) գալիս է մարտի 8-ին։ Տարին մենք ընդունում ենք 365 օր, այսինքն՝ քառորդ օրով պակաս։ Բայց իւրաքանչիւր տարուայ մի քառորդ օրը չորս տարի անցնելուց յետոյ կը կազմէ մի ամբողջ օր։ Չորրորդ տարին մենք յետ ենք լինում մնացած (նահաջած) մի ամբողջ օրով։ Գարնանային գիշերահաւասարը մենք դարձեալ կը հաշուենք մարտի 8-ին, իսկ իրօք նա այս տարի կը գայ մար-

տի 9-ին, քանի որ մենք այս ժամանակ մի օրով պակաս հաշուեցինք, որ խակալէս չկար։ Ութ տարուց յետոյ սա կը կազմի արդէն երկու օրուայ տարբերութիւն, 16 տարուց յետոյ՝ 4 օրուայ և այլն։ Առաջին տարիներում սխալը աննշան կը լինի և գրեթէ անկատելի։ Բայց բաւական ժամանակ անցնելուց յետոյ, օրինակ հարիւր տարուց յետոյ, տարբերութիւնը, շարունակ աճելով, այն տեղը կը հասնի, որ մենք յետ կը մնանք 25 օրով, համարեա մի ամսով։ Եւ երբ օրերի հաշուով մենք կարծելիս կը լինենք թէ արդէն գարնանային գիշերահաւասարն է, իրօք բանից կ'երևայ որ հարկաւոր է ապասել դարձեալ գրեթէ մի ամբողջ ամիս, մինչև որ երկիրը կը բռնի այդ գիրքը։

Բայց այս դեռ բոլորը չէ։ Երեք հարիւր տարուց յետոյ, երբ այս կերպով կազմած օրացոյցի համաձայն կը նշանակուի գարուն, մեզանում կատարեալ ձմեռ կը լինի։ Նոմբր գարից յետոյ տարուայ եղանակները կը գան օրա-

ցոյցին բոլորովին հակառակ. ամառը կը գայ յունուարին, իսկ ձմեռը՝ յունիսին։ Կարելի է երևակայել, թէ ինչ շփոթութիւն, ինչ անկարգութիւն առաջ կը բերի այս ամէնը։ Փոխանակ դաշտային աշխատանքները և տարեկան ծոները կարգաւորուին ուղեցոյց լինելու՝ այսպիսի օրացոյցը միայն կը մոլորեցնի ամենքին։ Բայց ինչպէս պէտք է անել իսկապէս։

Յուլիոս պապը.—Լրացուցիչ օրերը.—Նահանջ պարք.—Օրացոյցը արևի շարժողութեան հետ համաձայնեցնելու և եղած անհամապատասխանութիւնը մէջ տեղից վեր առնելու համար Յուլիոս կայսրը՝ հռոմէական հասարակապետութեան իշխանապետը (դիքտատորը) դիմեց խորհուրդ հարցնելու յոյն աստղաբաշխ գիտնական Սոսիգենէսին, որ սրա համար մտածեց հետևեալ հասարակ միջոցը։ Որովհետև իւրաքանչիւր աստղաբաշխական տարի քառորդ օրով աւելի է 365 օրից, և հետևապէս իւրաքանչիւր չորս տարի անցնելուց յետոյ առաջ կը գնայ մեզնից մի օրով, ուստի, սրա առաջն առնելու համար կ'աւելացնենք մի օր չորրորդ տարուն,—այն ժամանակ մենք համաձայնած կը լինենք աստղաբաշխական տարուայ հետ և միաժամանակ կը սկսենք նրա հետ հետևեալ նոր տարին։ Յիրաւի, երեք 365 օր և 366 օր ունեցող տարիները կ'ունենան այնքան օր, որքան և չորս տարին 365¼ օրով։

Քաղաքացիակ. տ.		Աստղաբաշխ. տ.
1-ն տարի	365 օր	365¼ օր
2-րդ „	365 օր	365¼ „
3-րդ „	365 օր	365¼ „
4-րդ „	366 օր (նահանջ)	365¼ „
	1461 օր.	1461 օր.

Այսպիսով տարբերութիւնը այլ ևս շարունակ չի մեծանայ։ Այն չորրորդ տարին, որին աւելացուում է մէկ լրացուցիչ օր, այսինքն՝ 366 օր ունեցող տարին, կոչւում է նահանջ պարք։ Կը տեսնենք շուտով թէ ինչու։

Նախ և առաջ անհրաժեշտ է գիտենալ, որ կար ժամանակ, երբ հռոմայե-

ցոց տարին սկսւում էր մարտի 1-ից։ Մարտը տարուայ առաջին ամիսն էր, ապրիլը՝ երկրորդ և այլն. սեպտեմբերը եօթներորդն էր, հոկտեմբերը՝ ութերորդը, նոյեմբերը՝ իններորդը, դեկտեմբերը՝ տասներորդը, ապա յունուարը՝ տասնումիներորդը և վերջապէս փետրուարը՝ տասներկուերորդը, այսինքն վերջին ամիսը, որ պարունակում էր իր մէջ միայն 28 օր։ Երբ սկսեցին մի լրացուցիչ օր աւելացնել իւրաքանչիւր չորրորդ տարուն, այն ժամանակ, հասկանալի է, այդ օրը գետեղում էին տարուայ վերջը, այսինքն՝ փետրուարի վերջը։ Ուղիղ այնպէս էլ մենք ենք գետեղում։ Այսպիսով չորրորդ (նահանջ) տարուայ մէջ փետրուարը 28-ի փոխանակ՝ ունէր 29 օր։ Միւս՝ 365 օր ունեցող երեք տարիները կոչւում էին հասարակ (սովորական, ոչ-նահանջ) տարի։ Բայց, պէտք է գիտենալ, որ հռոմայեցիք մի տարօրինակ ազգ էին, և ունէին շատ տարօրինակ սովորութիւններ։ Նախ՝ նրանք օրերը դասաւորում էին հակառակ կարգով, այսինքն՝ ամսուայ վերջից։ Օրինակ. փոխանակ ասելու մարտի 31, նրանք ասում էին՝ առաջին օր նախ քան ապրիլը, փոխանակ 29-ի, կրրոդը նախ քան ապրիլը և այլն։ Երկրորդ՝ և այս կատարեալ անհեթեթ քան է,—նրանց կարգիքով փետրուարը միշտ պէտք է ունենար 28 օր. այսպիսի մի հաշիւ փոխելը նրանց հասկացողութեամբ մի մեղանչական, անանդնիւ գործ կը լինէր, որ շուտով նրանց կը ձգէր մեծամեծ դժբաղդութիւնների մէջ... Բայց և այնպէս անհրաժեշտ էր այս անել։ Ի՞նչ պէտք էր անել։ Նրանք, ինչպէս դուք կը տեսնէք, մտածեցին մի շատ խելացի բան, այն է՝ համաձայնեցին աւելացնել մի օր այն պայմանով որ չհաշուեն այն... Նրան, այնպէս ասած, թաքցրին միւսների մէջը, հաշուելով ամսի վերջից. բայց, Աստուած մի արասցէ, եթէ նրան անուանէին եօթներորդ, այն ժամանակ դարձեալ ամէն ջանք զուր անցած կը լինէր։ Այս պատճառով նրան անուանեցին «չ՚ էզերորդ», լաստ-

ներէն՝ bis—sextus, որ բիւզանդական —ռուս արտասանութեամբ գուրս եկաւ високосъ: Այն տարին, երբ հարկաւորւում էր փետրուարի վերջը ասել երկու օր, սկսեցին ասել високосный— bissextilis (նահանջ): Այսպիսի խորամանկութեան շնորհիւ ամէն բան կարգի ընկաւ, և աստուածները ոչինչ չիմացան դրա մասին... Ինչքան է մարդկային անտիրապետութիւնը:

Մենք պահել ենք այդ լրացուցիչ օրը, որ անհրաժեշտ է հաշուի մէջ կանոնաւորութիւնը վերականգնելու համար, և թողել ենք փետրուարի վերջը: Բայց, ի հարկէ, մենք ոչինչ կարիք չունենք այդ լրացուցիչ թիւը ծածկելու. մենք քաջ-քաջ իւրաքանչիւր չորս տարուց յետոյ փետրուարին աւելացնելով 1 օր՝ շինում ենք նրան 29-ով, երկիրն էլ մեր այս արարմունքից ամենևին դանդաղ չէ շարժւում:

Անկարգութիւնը վերացնելու համար այսպէս մի լրացուցիչ օրով կերպարանափոխուած օրացոյցը կոչուեցաւ Յուլեան տոմար՝ Յուլիոս կայսրի անունով,

որ մտցրեց այս յեղափոխութիւնը Ք. Ծ. 46 տարի առաջ, այսինքն՝ աւելի քան 19 դար մեզնից առաջ:

Գրիգորեան տոմար.—365 օր ունեցող քաղաքացիական տարուայ և աստղաբաշխական տարուայ մէջ եղած տարբերութիւնը չէ կազմում, սակայն, ուղիղ քառորդ օր կամ 6 ժամ. նա հաւասար է 5 ժամ 48 րոպէի և 48 վայրկեանի, այսինքն՝ 11 րոպէ 12 վայրկեանի նրանից պակաս, որ մենք առաջ ի հաշիւ չառանք: Աւելացնելով չորս տարուն մի ամբողջ օր՝ մենք հարկաւոր եղածից աւելի ենք աւելացնում, այսպէս ասած՝ առաջ ենք վազում իրերի բնական ընթացքի դէմ: 128 տարուց յետոյ այս չնչին տարբերութիւնը արդէն մի ամբողջ օր է կազմում, և մենք մի օրով առաջակարուկ ենք անում տարուայ եղանակների փոփոխութեան վերահասին: 1280 տարի անցնելուց յետոյ տարբերութիւնը արդէն հասնում է 10 տարուայ: Վերականգնելու համար այն կանոնաւոր հաշիւը, որ այս աստիճանաբար աճող տարբերութիւնից

բաւական խանգարուելու էր, Գրիգոր ԺԳ. պապը վարուեց այնպէս, ինչպէս իր ժամանակին վարուեց Յուլիոս կայսրը. նա էլ գիմեց խարուլդ հարցնելու մի աստղաբաշխի։ Այս դուսումնականը պատասխանեց որ նախ և առաջ պէտք է գուրս ձգել այն աւելորդ 10 օրերը, որ վրան հաշուում էին Յուլիոս կայսրի ժամանակից, ապա պէտք է ձգել ապագայի նկատմամբ նահանջ տարուայ լրացուցիչ օրերը՝ իւրաքանչիւր 400 տարին 3 անգամ։ Աւելի յարմարութեան համար պէտք է այս մինխարինել ջոջոջ պոչերի նահանջ օրերին, այսինքն՝ այն տարիների, որոնցով սկսուում է գարահաշիւը, ոչնչացրնելով նրանց մէջ այս օրը կարգով երեք անգամ, և թողնելով նրան չորրորդ անգամին։ Այսպիսով 1700, 1800, 1900 տարիները, որ տարեգրութեան նախկին կարգով պէտք լինէին նահանջ, նոր կարգով կ'ունենան միայն 365 օր, իսկ չորրորդ՝ 2000 տարին կը մնայ նահանջ։ Այսպիսի կատարելագոյն տարե-

հաշիւը կոչուում է Գրիգորեան պտոյտ *)։

Հռոմայեցիք, լինելով պատերազմական ժողովուրդ, տարուայ առաջին (մարտ) ամիսը անուանեցին իրանց պատանձնապետ յարգուած պատերազմի աստուած Մարսի (Հրատ) անունով։ Ապ-

*) Գրիգոր ԺԳ. պապը, որ մեծ իշխանութիւն ունէր այն ժամանակուայ արևմտեան բոլոր թագաւորների վրայ, 1582-ին հրատարակեց մի օրինադրութիւն (դեկրէտ), հրամայելով որ սոյն տարուայ հոկտեմբերի 5-ը համարեն նոյն ամսի 15-ը և գործադրեն իր նոր կազմակերպած օրացոյցը։ Այս հրամանը՝ տեսնելով մէջը եկեղեցական բռնակալութեան մի նոր արտայայտութիւն, սաստիկ ընդդիմութեան հանդիպեցաւ բողոքական տերութիւնների կողմից։ Անգլիայում Գրիգորեան տոմարը, կամ, ինչպէս ասում են, նոր տոմարը (ոճը) մտցուեցաւ միայն 1752 թ. պարլամենտական արձանագրութեամբ, երբ տարբերութիւնը արդէն հասել էր 11 օրուան, ուստի և սեպտեմբերի 3-ը

բիլը ծագում է Բոնոլ խօսքից, որովհետև այս ամսին բոյսերի սերմերը բաց են անում երկիրը, բացւում են նոյնպէս բոյսերի ծաղկեայ կոկոնները: Մայիսը նուիրուած էր Մայիս աստուորոշուած էր համարել 14 և նոր տարին սկսել ոչ թէ մարտի 25-ից, այլ յունուարի 1-ից: Ընայելով հին՝ յուլեան տոմարի բոլոր անկատարելութիւններին՝ հասարակ ժողովուրդը միշտ դէմ էր նրա կերպարանափոխութեանը բոլոր տէրութեանց մէջ: Ռուսիան, և առհասարակ ամբողջ յոյն *) եկեղեցին տակաւին և այժմ վարւում է հին տոմարով: Ուստի ռուսաց **) տարեհաշիւը արևմտեանի հետ կամ հին տոմարը նորի հետ հաշտեցնելու համար՝ պէտք է առաջինին աւելացնել 12 օր. օրինակ, մենք հաշւում ենք յունուարի 1-ը այն ժամանակ, երբ մնացած Եւրոպայում հաշւում են արդէն յունուարի 13-ը:

Ծան. թարգմանչի.

*) Նոյնպէս և հայ.
**) Եւ հայոց.

ածուհուն: Յանիսը ստացել է իր անունը Իանուս աստուածուհուց: Յանուարը (Իանուարը) կոչուած է Իանուս (Յանոս) աստուծոյ անունով, Փեբրուարը՝ մեռելների Փէբրուս աստուծոյ անունով: Վերջապէս, դրանից շատ ուշ, հինգերորդ ամիսը անուանեցին Յուլիոս Հայսրի պատուի համար՝ Յուլիս և վեցերորդը՝ միւս կայսրի պատուի համար՝ Օգոստոս: Յաջորդ կայսերից ոմանք նոյնպէս փորձեցին իրանց անունը տալ ամիսներին, բայց նրանց ջանքերը յաջողութեամբ չպսակուեցան: Վերջին ժամանակների յաճախ փոփոխում էին տարուայ սկիզբը, վերջապէս վճռեցին, չգիտես՝ ինչու, տարուայ սկիզբը համարել ձմեռուայ մէջտեղից (յունուարի 1-ից):

Ըստ սովորութեան, ըստ ռուտինայի, հռոմայեցոց՝ ամիսներին տուած անունները, հակառակ առողջ դատողութեան, պահպանւում են և ցարդ: Սա է այն միակ պատճառը, որով մեր ամիսներից շատերը կրում են հին աստուածութիւնների անունները, որոնց

ոչ ոք այլ ևս չէ հաւատում, և որոնք չեն եղել մինչ անգամ մեր նախնեաց աստուածները։ Նրանցից մէկը կրում է Յուլիոս կայսրի անունը, այն մարդու անունը, որ քիչ չարիք չէ հասցրել մարդկանց, իսկ հեռաւորը՝ Օգոստոսի՝ միւս բռնակալի անունով... Ինչ վերաբերում է քսան կարգի հաշուի իրանց անունները պահպանող ամիսներին, դարձեալ վատ է, որովհետև տարին սկսւում է յունուարից, և սեպտեմբերը, որի անունը նշանակում է եօթներորդ, յայտնւում է իբրև իններորդ։ հոկտեմբերը ութերորդի փոխանակ դարձաւ տասներորդ։ նոյեմբերը բռնում է տասնումիներորդ ամսուայ տեղը, իսկ դեկտեմբերը՝ տասներկուերորդինը. մի խօսքով՝ ամէն քան դուրս է եկել թարս։

Շաբաթուայ օրերը.—Այն եօթնօրեայ շրջանը, որ մենք կոչում ենք եօթնեակ կամ շաբաթ, նոյնպէս իր սկիզբը ստացել է խոր հնութեան մէջ։ Շատ հազարամեակներ էին անցել այն ժամանակից, երբ մարդիկ նկատեցին եռեք

Լուսաւորիչներ, որոնք բաւական շուտ շուտ փոփոխում էին իրանց դիրքը երկնքում, մինչդեռ աստղերը անշարժ են թւում. այդ լուսաւորներն էին՝ արևը, լուսինը և այն ժամանակ յայտնի հինգ մոլորակները։ Դրանք ամենքը կրում էին այն ժամանակուայ աստուածների անունները. հինգ նրանց էլ նուիրուած էին շաբաթուայ օրերը։ Արևմտեան ազգերը պահպանել են այդ անունները, որովհետև նրանք ընդունուած էին հռոմայեցիներից մի քանի փոփոխութիւնով։

Ահա օրինակ, ինչպէս են անուանում շաբաթուայ օրերը Ֆրանսիացիք։—

Երկուշաբթի—Lundi—Lunoe dies—Լուսնի օր.

Երեքշաբթի—Mardi—Martis dies—Մարսի օր.

Չորեքշաբթի — Mercredi—Mercurii dies—Մերկուրիի օր.

Հինգշաբթի—Jeudi—Javis dies—Իպիտերի օր.

Ուրբաթ—Vendredi—Veneris dies—Վեներայի օր.

Շաբաթ—Samedi—Saturni dies—Սատուրնոսի օր.

di վերջաւորութիւնը, ակներև է որ, լատիներէն dies—օր բառի կրճատումնէ։

Առաջին օրը Արեւի օրն էր, Solis dies և այս նշանակութիւնը դեռ ևս պահպանւում էր անգլիացիների, գերմանացիների մէջ և այլն (Sunday. Sontag)։ Ֆրանսերէն dimanche խօսքը առաջ է գալիս dies dominica խօսքից և նշանակում է „տէրունական օր"։

Կ. Փէմմրիան.

Բ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԽՈԼԵՐԱՅ

Խոլերայով վարակուելուց առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել հետեւեալ նշանները.—Խոլերայով հիւանդացածների մեծ մասը (40-ից մինչև 60 տոկոսը) մեռնում են այն պատճառով, որ անուշադիր են թողնում նրա առաջին շրջանների բժշկութիւնը և բժիշկները ու թէ ոչ-բժիշկները խոլերայ են համարում միայն դրա վերջին, այսպէս անուանուած Stadium algidum շրջանը, որ արդէն մեծ մասամբ դժուար է բժշկել։

Ո՞չ ապաքէն մի այդպիսի վտանգաւոր նախապաշարմունք ոչ մի ուրիշ հիւանդութեան մէջ գոյութիւն չունի։ Ուշի ուշով դիտելով այն հիւանդութեան աստիճանաբար զարգացումը համաճարակի ժամանակ, դժուար չէ համոզուել որ նրան նախընթաց են լինում զանազան անհնարական ճանապարհների խանգարմունքներ, որ բո-

լորովին հեշտ է բժշկել, բայց որ անուշադիր թողնելու և պարտուպատշաճ օգնութիւն չհասցնելու դէպքում անխուսափելի կերպով փոխւում են խոլերայ։ Ինձ չայտնի են չորս այդպիսի խանգարմունքներ։—

